



ՄիաՄանթո

Յոզնութիւն

Հոգիիս վրայ լուսինը կը ձիւնէ...

Օ՛, դէպի Խաւարներն ու Մոռացումը քալէ՛,
Ո՛վ յոգնած ու դանդաղ ու ծանր ուխտաւոր,
Աղբիւրներու սա՛ պայծառ տղուն հետ առանձին.
Ան հոնտեղերը մարմարէ մեհեաններ գիտէ,
Ուր հինաւորց աստուածները՝ ազնուօրէն գորաւոր,
Քու յոգնութիւնդ կը հասկնան...

Ու մարդկօրէն անոր մեծ ցաւը կ'ապրին...:

Աւա՛ղ, մինչեւ ե՛րբ մեր մարմինները տարփաւոր
Այսչափ տենդօրէն պիտի գալարուին...

Դէպի փայտէ դագաղները դարաւոր՝
Յաիտենական ու ապարդիւն կեանքին,
Վերջապէս իրիկուն մը մխրճուելու համար...

Թէեւ այնչա՛փ չարաշուքօրէն

Արհաւիրքով լեցուն, բայց փրկարար ծոցը հողին:

Գիտեմ, սքեմիդ մէջի վանականի իրանդ ոսկիէ

Շատ ապրած Աստուածի մը խոնջէնքն ունի.

Ուրեմն եկո՛ւր սա խարտեաշ ու խորունկ ու լուռ ու մերկ հարսներէն լեցուած՝

Մեր գինիի նուիրական սափորն ա՛լ վար դնենք,

Թէեւ ան մեր երգերուն խենթութիւնը կ'ըլլար...

Ու այն բոլոր արշալոյսէ ծաղիկները, որ քաղեցինք,

Անկարելի պաշտամունքին համար...

Այս բոլորը ձգենք, մեր կուրծքերուն աղամանդէ խաչերուն հետ,
 Ո՛վ բարեկամ ու բախտակից ու հոյակապ քրմապետ,
 Այնպէս չէ՞, ես ալ այս բոլորը ճանչցայ,
 Քեզի հետ ա՛յնչափ ապարդիւնօրէն,
 Իմ սիրահար տղու խօլաթեւ իրիկուններու մէջէն,
 Յոգնած եւ արիւնտ ճակատիս դիմաց, անհունօրէն, առ յաւէտ...:

Ու արդէն աւագներու մոզերն աստղերուն տակ ըսին թէ
 Հողին բոլոր գինիները ա՛լ մոլախիւնդ պիտի ըլլան,
 Ու բոլոր կապոյտ շուշաններն ալ ձեր Յոյսի ծաղկանոցին,
 Ամենը մէկ, յանկարծօրէն ազոաւներու պիտի փոխուին...

Ու յետոյ գիտես որ բոլոր օձերը փեթակներուն տակ,
 Մեզի համար այն սե՛ւ անձրեւներէն ի վեր, հիմակ,
 Մահագուծօրէն վաղուան մեղրը կը պատրաստեն,
 Ու դեռ կարծեմ թէ գետնափորներուն մէջ է որ
 Բոլոր բրուտները, մեռելներու հողերէն,
 Ո՞ր ժամանակէն ի վեր ապրողներուն համար մինչեւ այսօր
 Ջուրի կուժեր կը շինեն...

Ու այն լամպարը, որով Յնորքը կը հսկենք մեր կտաւէ վրանին տակ,
 Ահաւասի՛կ, քեզի կ'ըսեն, Արշալոյսէն դեռ շատ առաջ պիտի մարի...:

Օ՛, թեղ թեիս անցո՛ւր ու խարխափելէն քալէ՛,
 Ո՛վ ծանր ու դանդաղ ու յոգնած ուխտաւոր,
 Որովհետեւ վաղորդայնը անգթօրէն սուտ է...

Ու մեր զգայախաբի ոտուրներն ալ յոգնած,
 Կեանքին մինչեւ Իրիկունները երթալու համար:
 Դէպի խաւարն ու Մոռացումը թափանցէ՛,
 Ջուրերու երիտասարդ գաւակին հետ առանձին,
 Ու քու տարագիր ճամբորդի տառապանքդ բոլոր
 Ու այն աղջամուղջի դարերը, գոր օրերն ուսերուդ վրայ հարկեցին...

Այդ բոլորը ամէնը մէկ ինձի տո՛ւր...

Ու միսիդ պատանքներն ալ հոգիիս վրան նետէ՛...

Թեղ թեիս անցո՛ւր ու քալէ՛ Տալին հետ հայրօրէն,
 Անոր վիրաւոր եղնիկի աշուրներն իմաստուն
 Կեանքին բոլոր ճամբաները գիտեն...

Հոգիիս վրայ լուսինը կը ձիւնէ...